


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ ֆր. 8 Մժ.ճ.
Պաշտոնաց 10 Մժ.ճ.
Վեցամսեայ Կ. Պոլսոյ ֆր. 4 Մժ.ճ.
Պաշտոնաց 5 Մժ.ճ.
Մասնագուման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ ստորագրութիւն կը-
լայ :



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ 11 ՀԱՅԿԱՅԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ասիոյ կողման պատերազմաց վրայ
Կաղի Մուսթար փաշայէն նոր հեռա-
գիր չհրատարակեցաւ, բայց Կարնոյ
հրամանատար Հասան Թահսին փա-
շային և Կարնոյ կուսակալին փոխա-
նորդ Աքիֆ Էֆենտին հեռագրա-
լուրերը քանի մը նոր տեղեկութիւն-
ներ կուտան, և Ռուսաց մէկ պաշ-
տօնական հեռագրին եօթն փաշա,
32 թնդանօթ և տասն և հինգ հա-
զար գերի առնուին զոյցները կը ցը-
րեն : Հասան Թահսին փաշան կըսէ
թէ Մուսթար փաշա Սոգանլուի լեռ-
ներն Հէզար-Պոզարին եկեր է : Իսկ
Ֆէրիք Հաճի Բաշի փաշան իւր զոր-
քով Սուլթանի մօտ Հիւսէյին թէ-
փէսի էր : Աքիֆ Էֆենտին հեռագիրն
ալ կը ծանուցանէ թէ Հաճի Բաշի
փաշան Ալաա Տաղի վրայ Զին Եայ-
լասի անուն տեղն է, ուր թնամուդն
յարձակումէն ապահով է և պաշարի
համար ներդրութիւն չկրէր : Այս գիր-
քին և Մուսթար փաշայի Հէզար Պո-
զարի գիրքին մէջ եղած հեռաւորու-
թիւնը տասներկու ժամ է եղեր : Այս
հեռագիրները թէ և կը հաստատեն
թէ Հաճի Բաշի փաշան անձնատուր
եղած չէ, բայց դժբաղդաբար կը
տեսնուի որ իրեն բռնած գիրքը վը-
տանդէ աղատ չէ, քանզի եթէ իրեն
անմիջապէս օգնութիւն չհասնի, կամ
եթէ ինք չկարենայ թնամուդն գի-
ծերը պատուել անցնիլ, կարելի է
որ միւրեքի կարօտութիւն ունենայ :
Այս զորաբաժնին վիճակին վրայ կա-
տարեւապէս ապահով ըլլալու համար
յետագայ տեղեկութեանց սպասել
հարկ կըլլայ, մանաւանդ որ վերո-
գրեւեալ հեռագրալուրերն ալ մասնա-
ւոր աղբիւրներէ առնուած են :

Եւրոպական լրագրաց հեռագրա-
կան տեղեկութիւնները կը ծանուցա-
նեն թէ Ռուսաց և Ռուսիոյ բանակ-
ները Բլէյնայի առջև ամրութիւններ
ու ականներ շինելու զբաղած են, ո-
րոց օտարազգիներու այցելութիւնն
արգելուած էր : Կրապիցայի ականնե-
րն երկրորդ կրապիցայի ամրոցին
մերձեցած էին, և յարձակումը մօ-
տալուտ էր : Կաղի Օսման փաշային
հոկտ. 7 թուով մէկ հեռագիրը կը
ծանուցանէ թէ անցեալ ուրբաթ օր
Ժամ 7ին Օսմանեան բանակին ճա-
կատին և աջ թևին վրայ Ռուսք թըն-
դանօթով ու հրացանով կրակ ընելը
կըսան : Օսմանեան զօրքն ամեն կող-
մէն յարձակումը վանելու պատրաստ
էր : Թնամուդն Օսմանեան ալ կողմէն
ականներու մէջէ գալով և իրեն առ-
ջեւ հող լցուած կողմերը գնելով
փաշտէ մ'աւելի զօր հանեց յարձակ-

ման համար : Բայց յարձակողը Օսման-
եան զօրաց սաստիկ կրակին չկրնա-
լով տոկալ մեծ կորստեամբ յետոնա-
հանջեցին : Թնամուդն մարտկոցին վը-
րայ տեղացած Օսմանեան ռումբերէն
մի քանիսն ռադմամթերքի հանդիպե-
լով պայթեցուցին : Բլէյնայի դայմա-
գամին հոկտ. 1 թուով մէկ հեռագրի-
րը կը ծանուցանէ թէ թնամին Օս-
մանեան ամրութիւնները կը ռմբակո-
ծէր : Սեպտ. 18ին տասն ժամու չափ
ձիւնախառն անձրև տեղացած էր :
Ֆէրիք Աճէա Հըֆիլի փաշան եօթն
ու թնդանօթով և 13 վաշտ զօրօք
ճանապարհ ելած էր : Օրթանիէէն յա-
ռաջ քալող Գէվրէթ փաշայի հետ
միանալու և Վիտինի ու Սօֆիայի
ճանապարհին վրայ թնամին վանե-
լու համար : Սեպտեմբեր 27ին Աճ-
մէա Հըֆիլի փաշան Գէվրէթ փաշա-
յի հետ միացեր է Ազիզիէ գիւղը,
պէտք եղած կէտերը զօրք դուրս ե-
լու և Ռուսաց հեծնազօրին հետ պատե-
րադմուտ այս երկու ֆէրիքները Վի-
տինի և Սօֆիայի ճանապարհն ապա-
հովեր են : Մեր գրած միջոցին Բը-
լէյնայի նկատմամբ աչքերնուս առջև
գտնուած պաշտօնական լուրերն ա-
սոնք են, որք դարձեալ կը ցուցնեն
թէ Ռուսաց Բլէյնայի վրայ դուրծադ-
րած յատակագիծը գեռ ամենափոքր
յաջողութիւն մը չէ ունեցած : Ռու-
սաց հրամանատարութիւնը Պաքիստանէն
անցնող կուրքօ զօրավար մետասան
գունդ հեծնազօրօք և շատ մը թե-
թե թնդանօթներով Սօֆիայի ճանա-
պարհը զրկած էր : Բայց յիշեալ զօրա-
վարին շարժմանց վրայ տակաւին լուր
չկայ : Սակայն Գէվրէթ փաշա յաջո-
ղէր է Սօֆիայի ճանապարհն ապա-
հովել և ամրութիւններով ու զօրքով
լցնել :

Սիւլէյման փաշայի բանակին կող-
մէն 15 վրն ձեռքալի թղթակցը կը
ծանուցանէ թէ հոկտ. 5ին հետա-
գոտութիւն մ'երկեր է : Օսմանեան
երկու զօրաբաժինը Լօմ գետն անցեր
և դէպ 'ի Կիւլ-Չէյմէսի քաղեր են :
Կէս օրէն վերջը Սիւլէյման փաշա ալ
իւր սպայակոյտով Ռուսոսիւն շրջա-
կայները Գատըքէյի մօտ իւր զօրա-
բանակէն մեկնելու և քանի մը ժամէն
Լօմ գետն անցնող վաշտերուն հետ
միացեր է Պիլէյի ճանապարհին վը-
րայ : Բայց Ռուսաց թնդանօթները
կրակ ընել սկսեր են, և ռումբերն
ալ և ահեակ կը թափեն, առանց
սակայն Օսմանեան զօրաց մեծ վնաս
մը տալու : Օսմանեան որսորդ զօր-
քերու գունդ մը յառաջ զրկուեր է
դէպ 'ի թնամուդն ամրութիւններն,
և այս զինու թեանց եղրակացութիւնն
այն եղեր է որ Օսմանեան զօրաց տե-
սած փոսերը պարապ էին, բայց Պիլ-
կոս գիւղն ամրացած էր : Սիւլէյման
փաշա այս զինութեանէն ետեւ վերա-
դարձի փողն հնչեցուցեր և բանա-

կեողը դարձեր է : Հետեւեալ օրը
դարձեալ զինութեան պիտի ելնէր :

Քաղաքական լուրերու գալով,
միջնորդութեան յաջողութիւնն և հաշ-
տութեան հաւանականութիւնը տա-
կաւին խիստ հեռի են : Անգղիոյ երկու
գլխաւոր նախարարք միջնորդութեան
վրայ իրենց կարծիքն յայտնեցին :
Սըր Սթամֆորտ Եօրթթ պատերազ-
մին վերջաւորութեան հաւանակա-
նութիւնները գուշակելու անհնարու-
թիւնը ծանուցանելով՝ ըսաւ թէ ներ-
կայ պատերազմն անախակալ դէպքե-
րով լի եղաւ : Հիմա ալ գուշակողներ
կան թէ այս տարի չկրնար վերջնապի
և թէ մինչև որ պատերազմնուրայ մին
վճարական դերադրանքութիւն չստա-
նայ, պատերազմին վախճանն անյո-
սալի է : Այսու ամենայնիւ Անգղիա-
յի նախարարը կը յուսայ թէ կրնայ
անախակալ դէպք մը պատահիլ : Եւ-
րոպական ալ իրենց զինուորական քա-
ջութիւնն հաստատեցին, ուստի կըր-
նան պատերազմին վերջ տալու եղա-
նակ մ'ընդունիլ առանց կարծելու թէ
իրենց զինուորական համբաւը կը դը-
հեն : Անգղիոյ կառավարութիւնն,
յարեց նախարարն, իր շանքը չալտի
խնայէ երբոր միջնորդութեան ժամը
գայ : Լորտ Սալիսբորի ալ աստեա-
լաւ իր ըսած թէ Անգղիա կարելի
եղած միջնորդութիւնը պիտի ընէ,
բայց իւր ձայնը լսելի ընելու համար
Անգղիա զինուորական պետութիւնը
չէ, և իւր դեսպանագիտութիւնը մի-
այն խորհուրդներ կրնայ առաջ,
որք կրնան լսել ըլլալ : Միայն թէ, յա-
րեց Լորտ Սալիսբորի, երկու կողմէն
կիրքերը զայրացած են, և մինչև որ
մեծ յաղթութիւն մը կամ կատար-
եալ սպառում մը չգոյանայ, երկու
կողմն ալ պատերազմին պատճառ ե-
ղող պահանջումները չալտի թողուն :

Այս սպառումը տակաւին կատար-
եալ չէ : Ռուսիոյ մէջ հասարակաց
կարծիքը՝ Ռուսական զօրութեանց հե-
տըջհետէ կրած ձախողութիւններ-
էն իրաւամբ զայրացած, Մեծ գուր-
սերուն գէմաստակի դժգոհութիւնը
յայտնէր : Նիքոլա մեծ գուրսն 'ի Պու-
ղարիս, Միքայէլ Մեծ գուրսն ալ 'ի
Հայաստան՝ տակաւին Ռուսական զօ-
րաց մեծ յաղթութիւններ ընել տը-
ւած չէին, և իրենց վերջին պար-
տութիւնները ծածկելու համար դը-
րած հեռագրերը խիստ քննադատու-
թեանց առարկայ եղած էին : Կարսի
առջև Ռուսաց ձեռք բերած նոր յա-
ջողութիւնը, թէ և իրենց ըսածին չափ
մեծ ալ չըլլայ, դժբաղդաբար իրենց
չափազանց պահանջումները նուազե-
ցնելու չկրնար ծնուայել : և վերհ-
Սուլէյման փաշան Ռուսիոյ դեսպան Զիլի
կոմսն ընդունելու առթիւ իւր չա-
փաւոր զգացումներն յայտնած էր,
չկրնար Ռուսիոյ պահանջումներն ըն-

դունիլ իւր իրաւունքը զոհելով : Այս
պարագայից մէջ պատերազմին շարու-
նակութիւնն անհրաժեշտ կը թուի,
մինչդեռ Եւրոպա ալ աննշան չէր
քուլիւն մը կը պահէ :

Վառնայէն հոկտ. 5/17 թուով 15-
վրն ձեռքալի ուղղեալ նամակ մը կը
ծանուցանէ թէ Սըրպոլայի մէջ (Ռուս-
ճուգի դիմացը) մեծ պատրաստու-
թիւններ կըլլան Ռուսական աւելի
ընդարձակ կերպիւ ռմբակոծելու :
Ռուսք լատ մ'իջոցին Գանուրի վը-
րայ, ուրիշ քրտերի խոշոր պայթու-
ցիկ ռումբեր կարձակեն քաղաքին
վրայ : Մինչև ցարդ մասնաւորաց չեն-
քերը ֆիստուկեցան այս ծփին մարտ-
կոցին ռումբերէն, Անգղիոյ հիւպա-
տոսին տունն և Գանուրի միջազգա-
յին յանձնաժողովը չենքերն ալ վնաս-
սեւոց կարգէն են :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 19 հոկտ.

Նախարարութիւնն երկու կարծեաց
բաժնուած է, մին ընդդիմադրութիւն կա-
ռաւարկէ մինչև իսկ 'ի կրկին լուծումն ու-
րնախոր երեսփոխանական ժողովը, միւս
կարծիքն ալ իրաւախօսութիւն կառաւար-
կէ : Մաք-Մաճոն մարալաստն այս մա-
սին իւր կարծիքն յայտնելու համար դա-
ւառական ընդհանուր խորհրդոց ընտրու-
թեան պիտի սպասէ :

Պաքիզ 19 հոկտ.

Այլքասնոր կայսրն յայտարարեց թէ
կայսերական ազգատոհմին անդամները
բանակին հետ պիտի կենան՝ անոր աչ-
խատութեանց մասնակից ըլլալու համար,
և աւելցուց թէ 'ի հարկին համայն Ռու-
սիա զենք պիտի առնու, ինչպէս ուրիշ
ժամանակներ :

Կորնի-Սթուտէն մէջ գումարեալ պա-
տերազմական խորհուրդն որոշեց որ Ռու-
սական բանակը ձմեռը Պուլաւիս ան-
ցունէ :

Փարիզ 20 հոկտ.

Վերջին ընտրութեանց մէջ Գաղղիոյ
բոլոր ընտրելիներուն ստացած քուէից
պաշտօնական թիւերուն վրայ հիմնեալ
հաշուոց նայելով, քուէարկուաց թիւն
եղած է (գաղթականութիւններէն զատ)
7,949,000 : Հանրապետականը ունեցան
4,515,000 քուէ : Այսպէս քուէարկուանք
3,656,000 քուէ : Տարբերութիւն 'ի նը-
պատտ հանրապետականաց 677,000 քուէ :

1876ի ընտրութեանց մէջ համայն Գաղ-
ղիոյ քուէարկուաց թիւն եղած էր (զտը-
թականութիւններէն զատ) 7,190,000,
այն է 1877ին 759,000 պակաս : Հանրա-
պետականը ստացեր էին 4,050,000 քուէ :
Իսկ պահպանողականը 3,160,000 քուէ :
Տարբերութիւն 'ի նպատտ հանրապետու-
կանաց 870,000 : Եւ որովհետեւ 1877ին
հանրապետականը 4,515,000 և 1876ին
4,050,000 քուէ ստացած էին, հետեւաբար
վերջին ընտրութեանց մէջ 285,000 աւելի
քուէ ունեցած են :

Պահպանողականը ալ 1877ին 3,656,000
ձայն և 1876ին 3,160,000 ձայն ստացած

են , ըսել է որ վերջին ընտրութեանց մէջ 476,000 ձայն կամ քուէ աւելի չաճած են , այն է հանրապետականներէն 195,000 ձայն աւելի :

Բեղրսպուրկ 20 հոկտ.
Հոկտ. 14 թուով կայսերական Ուլապ մը հրաման կընէ որ պահեստի բոլոր թընդանօթները պատերազմական վիճակի մէջ դրուին :

Պէշկրատ 20 հոկտ.
Ասիոյ մէջ Ռուսաց տարած վերջին յաղթութեանց աւելի Պէշկրատի մէջ լուսավարութիւն ընելն արդիւնեցաւ քաղաքապետութեան կողմանէ :

Լոնտոն 20 հոկտ.
Մօրնինկ Ատլէթիքայըր սուտ կը հանէ այն զրոյցը թէ Անգլիա իւր միջնորդութիւնն առաջարկեր է պատերազմի զայց միոյն կամ միւսին , և կաւելցնէ թէ ներկայ պարագայներն հաշտութեան առաջարկութիւններ ընելու նպատակով չեն :

Վիէննա 20 հոկտ.
Պ. Բրիտի , որ Բէշթա է , Ռուսիոյ նկատմամբ իտալիոյ համակրութիւնն ունենալը կը ժխտէ , ինչպէս նաև ի վնաս Աւստրո-Հունգարիոյ իւր սահմանն ընդարձակելու որ և է խորհուրդ :

Կոստամբուլի մէջ Ռուսիոյ մէջ նոր երկաթուղիներ շինելու սահմանափակ կաթիլ գործուց :

Փարիզ 20 հոկտ.
Հանրապետականը կը սնդեն որ Մաք Մահոն մարտնչաւոր հրաժարի :

Լոնտոն 20 հոկտ.
Լապլեր երկիւղ կը յայտնեն թէ անգլիական շահերն Հնդկաստանի մէջ վնասուելու սպառնալուց ենթարկուած են :

Ռուսիայէն լուր կուտան թէ յեղափոխական գաղտնի տպարան մը գտնուեր է Քիէվի մէջ , ուր կայսերական ազգաստիճանի հակառակ յայտարարութիւն մ'ենրեւցեր է :

Բեղրսպուրկ 21 հոկտ.
Կորնի-Սթուտենի հոկտ. 20 թուով եկած պաշտօնական հեռագիր մը կը ծանուցանէ թէ հոկտ. 19 ին օրը Բելիւսի մօտ Ռուսիոյ առած մէկ ամբողջութիւնը նոյն օրը թուրքերն ետ առնին :

Վալիսիլի 21 հոկտ.
Յորենին ներկայ հունձքն այնչափ առատ է , որ նման էրէք տեսնուած չէր Միացեալ Նահանգաց մէջ :

Նիւ-Պրիւսիլի մէջ Նիւ-Յորքի քաղաքի արուարձանը մեծ հրդեհէ մ'այրեցաւ : 250 տունը մոխիր դարձան և 2000 հոգի անպատասխար մնացին : Եղած վնասն 500000 տոլար կը հաշուեն :

Բեղրսպուրկ 22 հոկտ.
Կորնի-Սթուտենի եկած պաշտօնական հեռագիր մը կը խոստովանի թէ Ռուսիոյ մէջ հոկտ. 19 ին երկիւցս յարձակում ընելով Բելիւսի մօտ ամբողջութեան մը վրայ , 22 սպա և 907 զօրական կորուստ են մեռեալ ու վիրաւոր :

Բէշթա 22 հոկտ.
Անտրասի կոմսն այսօր Պ. Բրիտին ընդունելով , քաղաքական կարեւոր խօսակցութիւն մը չունեցան :

Նաբոլի 22 հոկտ.
Գարառաղի իշխանուհին իւր որդւոյն հետ Նաբոլի եկան :

Հեռագիր ՏՈՒՄԻՆԻ ԷՆԿԼԱՆԴԻՆ

Թէհրան 20 հոկտ.
Միջոց Ալի խան երէկ Թէհրանէն մեկնեցաւ Եւրոպա երթալու համար , որպէս զի Պարսից Նահին յառաջիկայ դարձան Եւրոպայ մայրաքաղաքները ծաղակալ սլառաւելու գիտաւորութեան համար հարկ եղած պատրաստութիւններն ընէ :

Պուրէշ 21 հոկտ.
Ռամանիւլ լրագիրը կը ծանուցանէ թէ Ռուսիոյ զօրքերն երեք անգամ մեծ քաղաքներէն Նիւ-Յորքի երկրորդ ամբողջութեան վրայ յարձակեցան , բայց ետ մղուելով իրենց պատնէշները քաշուցան :

Լոնտոն 22 հոկտ

Օսմ. քան.	10 4/16
Փոլս.	1863 40 3/4
"	1869 40 4/8
"	1871 38 3/4
"	1872 18
"	1873 40
Եղիպոս.	35 3/8
Անգլ. քան.	95 15/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Ուրբաթ և շաբաթ օրերն երեք ֆրդաթն , մէկ քորլէթ և երեք շոգենաւ լցուն զօրք և առաջմտնէրք դնացին ի Սի ծով :

Կրտսի թէ այս զօրութիւններն ինչպէս նաև ուրիշ կողմերէ ալ բազում զօրութիւնք օգնութեան կերթան Սիւմէտ Մուլթար փաշային :

Պատիւէթ լրագիրը կընէ թէ Պաղտատի բանակէն ալ 20 վաշտ զօրք արտօրնօք Հայաստան կերթան յօգնութիւն Սիւմէտ Մուլթար փաշային : Եւ մէկն զօրութեանն ալ մէկ մասն անմիջապէս Կ. Պօլսի զրկելու հրամանն դնացեր է հրամանատարին :

Կայսերական կառավարութիւնը շրջաբերականներ զրկեց դաւաճներն , որպէս զի կայսերական զօրաց համար ձմեռային հադուստներ պատրաստեն շուտով : Շրջաբերականն իւրաքանչիւր դաւաճի կողմէ տըրուելիք հադուստներուն թիւն ու տեսակն ալ որոշած է :

Արդէն Սիւլանիկի կուսակալութիւնն 90000 բանակալից բաճկն (հրքա) և 90000 զոյգ գուլպա տըւաւ :

Վեհ Սուլթանին թիկնապահներէն Հիւսէյին պէյ գեղապետն , որ յատուկ պաշտօնով Պալքանի բանակը դնացած էր , շաբաթ օրը Կ. Պօլսի վերադարձաւ : 12 ուս դերի բերելով , որոց մին մահճատակուն կըրօնքէ է :

Պէշկրայի Անգլիական Նաւատորմին հրամանատար Հօրնայի ծովապետն՝ Անգլիոյ գեղապետան առաջին թարգմանին հետ շաբաթ օրը Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Մեծ-Եղարքոսին և արաքքին գործոց նախարարին հետ :

Կրտսի թէ Ռադիլատի զօրաց նախորդ հրամանատար Սիւմէտ Է. յուպ փաշան կարնոյ զինուորական հրամանատար անուաներ է փոխանակ Հասան Թահսին փիշոյին :

Շաբաթ օրը Ղաթաթիոյ սեղանաւորները խորհրդակցութիւն մ'ըրին Մեծ-Եղարքոսին հետ Բ. Դուռն :

Նոյն իրիկունը տէրութեան նախարար Ե. Սիւլ-Իսիլ-Խալաֆ Էֆէնդիին տունն ի խորհուրդ գումարեցան :

Սինոպէն գրուած նամակէ մը կիւմացուի թէ քանի մ'Օսմանեան զբաղաւորք ծովապետ Հօպարթ փաշայի հրամանատարութեամբ Սի ծովուն ամեն կողմերը մինչև Կէրչի ջուրերը պտտելով թշնամի նաւու մը չեն հանդիպեր , բայց ծովապետին նրաւ տած Ստրի-Թէվիլիզ զբաղաւորին մեքենան աւրուելով , Հօպարթ փաշա Սինոպ վերադառնալու պարտաւորուեր է , Աստրի-Թէվիլիզ զբաղաւորն ինքնատին շոգենաւէն քաշուելով :

Անուանի Պ. Հիւշ անցեալ շաբաթ և ձմեռային հադուստ բաշխեց Ռուսիոյն դադլթական եկած երկու հարիւր չափ խղճալի խալամ ընտանեաց :

Կարինէն սեպտ. 22 հետեւեալ կը գրեն մեզ :

« Գաղաքիս մէջ օրերս հետեւեալ ճարպիկ գողութիւնը կատարուած է երկու վարպետորդաց ձեռքով : Տիգրանակերտցի ջորիկուն մը , որոյ գօտայն մէջ 12-13.000 զրէլ չափ թղթադրամ գտնուիլը նախազգա-

ցեր են այս վարպետորդք , եկեղեցւոյ բակէն անցնելու առնն , տանցմէ մին' որ իրեն ծանօթ և բնուելալ եղեր է , գետնէն փոքրիկ քսակ մը գտնելով՝ ջորեպանին կը ցուցնէ և կը խոստանայ զայն իր հետը բաժնել իրեն բազդակից : Միամիտ ջորեպանը կը հաւանի և ի միասին գետնէն քսակը չբացած՝ միւս վարպետորդին աճապարանօք ու յաղմուի վրայ կը հասնի ըսելով թէ քսակ կորսնցուցի , անշուշտ դուք գտնուէք , տուէք : Առաջին երկուքը կը ժխտեն , բայց վերջինը համազօր չուղելով՝ կ'սկսի վրանին խուզարկել . նախ իր ընկերին վրան կը խուզարկէ , և որպէս թէ անոր քով բան մը չկրնալով գտնել , ջորեպանին կը դառնայ , վրան կը խուզարկէ , դուռն քակել կուտայ , թղթադրամաց պահարանը խուզարկելով՝ անշուշտ քսակը ճարպիկութեամբ մը ծրար մը կանհետացունէ , և որպէս թէ դժգոհ իր քսակը չկրնալ գտնելուն համար՝ կըստաւանայ անոնց ոտի-կանուլթեան զինուոր մը երթալ բերել , և ամենայն ճեպով կ'ընկը կը դնէ : Միւս ընկերը՝ « խուլթան » շուտ մը փախչի , ազատինքն ապա թէ ոչ՝ հիմայ զինուոր կը բերէ , զմեզ բռնել կուտայ ըսելով՝ ջորեպանը կը համոզէ , և կը փախչին տարբեր ուղղութեամբ : Ջորեպանն իր կեցած պահուցի դառնալով՝ իրողութիւնն իւր մէկ բարեկամին կը պատմէ , և անոր խորհրդով իր թղթադրամները համբերով կը տեսնէ որ հինգ հազար քանի հարիւր զլի ծրար մը անհետ եղած է : Ջորեպանը կառավարութեան բողոք բարձրէ , և շարադրօք ձեռք բերուելով բանտարկուած են , բայց չէ կըցեր իւր ստակը ձեռք բերել :

« Ջորեպանին մէկ թուրք ընկերն ալ , որ ջորեպանին քովն եղած ստակներուն մէջ բաժին ունի եղեր , բայց անոր պատահած խաբէական կորուստեանը չէ հաճեր մասնակցիլ , ուրիշ կերպ խաբէութեան մը զօհ եղած է : Իւր ունեցած թղթադրամները խոստ չահաւէալ գնով մը մէթալիքի հետ փոխել կառավարի իրեն տնձ մը (զօրական մը) , և երկդունեայ շինուածքի մը դրանն առջև տանելով՝ թղթադրամները քովէն կ'առնէ , և « հօս կիցեր , ահա՛ մէթալիքը կը բերեմ » ըսելով՝ ներս կը մտնէ և ալ չերեւի , անշուշտ միւս գետնէն աներեւոյթ լինելով :

« Մաքուր դրամներն օրերս նորէն վեր ելնել սկսան . Օսմ. լիւան , որ 184-185 զրէլ էր , այժմ մինչև 190 զրէլ բարձրացաւ :

« Պարէշներու գնոյն վրայ դուրդալի փափուլութիւն մը չեղաւ , բայց կը յուսացուի որ երթալով բաւական արժանեան :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼՍ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

10 հոկտ. երկուշաբթի իրիկուն	41,
11 հոկտ. երեքշաբթի առաւօտ	40.33
բացուեցաւ	41,
ժամ 6 ին	41,
Բուլճարի երկաթուղի	Ֆր. 29 50
Թղթադրամ	լիւ. 194
ԸՆԹԱՅՐ ԱՐԺԹՂԹՈՅ	
Կ. Պօլսի 10 հոկտեմբեր	
Ստիլթէ Դէնթալի բաժ. Անգլ. լիւ.	3, 8
« Փոխանակութեան »	2.10
Կ. Պօլսի Պաղքային	3, 8
Քրէտի Դէնթալ	3.42
Քրէտի Օսթրո-Թուրք	—

« Այս գողութեան հնարքն անցեալ տարի Կ. Պօլսի մէջ ալ ըսին մը գոհեր ըրաւ , բայց ի վերջոյ հաղորդելով , հիմա ալ դաւաճները փախդրուած կերի :

Փոլս.	1863	Ֆր.	54
"	1865	"	54
"	1869	"	50
"	1872	"	47 1/4
"	1873	"	49
Թրամուայ		Օսմ. լիւ.	4 10
ԸՆԹԱՅՐ ԿՐԹՈՅ			
10 հոկտեմբեր			
Անգլ. լիւ.		զր.	109 5
Նաբոլի տոկի		"	86 42
Խմէնիալ Ռուս		"	8
Ղըրմից		"	54
Հինգ ֆրանք		"	—
Հինգնոց		"	417
Պրիւսի		"	464

ԱԶԳԱՅԻՆ

Շաբաթ օրը Ս. Պատրիարք հօր անուան տօնն ըլլալով , Բ. Դուռն կըրօնական դործոց տեսուչը՝ Մեծ-Եղարքոսին և արաքքին գործոց նախարարին կողմէ շնորհաւորութեան եկաւ Ն. Սրբազնութեան :

Պատրիարքական փոխանորդին դէմ արձակուած ամբաստանութիւնները ընելու պաշտօն ունեցող յանձնաժողովն երէկ հրաւիրուած էր ի Պատրիարքարան , բայց անդամոց մեծագոյն մասին բացակայութեան պատճառաւ չկրցաւ նիստ կազմել , հետեւեալ վերոտին ի ժողով հրաւիրուեցաւ յառաջիկայ երկուշաբթի օրը :

Փափաքելի է որ յանձնաժողովը ժամ առաջ կատարէ իւր պաշտօնն , որպէս զի արդարութիւնն երևան ելնելով՝ դայթակղութիւնը մէջ տեղէն վերնայ :

ՊԵՏՏՈՒԱՆ ԹԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳ. ԿՐԹ. ԺՈՂՈՎՈՅ

Զմեռնայ առաջնորդ Դեր. Տ. Մելքիսեդէկ վարդապետ Մուրատեանի 24 սեպտեմբեր ամսաթիւ մէկ տեղեկագրին նայելով , ասկէց 14 տարուց չափ յառաջ վանայ խաչ-փողանու թաղէն Պօլիկնից Աստուր անուն մէկը Զմեռնայ երթալով՝ ըստ օրինի կը պատկուի Մանիսայի մի օրիւրի հետ , և մի աղջիկ գաւակ թողլով կանհետանայ : Անկէց ի վեր հէք կ'ընեն ու աղջիկը կ'սպասեն , և ամենին լուր չկայ յիշեալ Աստուրի վրայ :

Ազգ. կրօնական ժողովն ի նկատի առնելով զայս խնդիր՝ որոշեց բովանդակ ազգային լրագրաց մէջ հրատարակել և օրենք Պօլիկնից Աստուրի հետքը , և հրապարակաւ խնդրել , թէ ո՞վ որ գիտէ թէ ո՞ւր կը գտնուի նա , մեռած է թէ կենդանի , և եթէ կենդանի է՝ ի՞նչ դործով կ'ընալի , փութայ ծանուցանել Ազգ. Պատրիարքարանին ի պատշաճ տնօրէնութիւն քառամեայ պայմանաւ մը մէջ , որոյ լրմանէն յետոյ ոոյն պաշտօնական յայտարարութիւնը զօրութիւն չափի ունենայ բնաւ :

5 հոկտ. 1277 (ԿՅԷ)

« Խմբագիր .
Հետեւեալ պաշտօնագիրը՝ որ ազգային վարչութեան նախորդ մի որոշումը վերստին կը հրամայէ գործադրութեան դնել տալ , կը խորհրդում բարեհաճիք հրատարակել ի զի տուլթիւն պատուարժան ազգայնոց մերոց :

10 հոկտ. 1877 Աղօթարար
Ի Պարիւր Հայոց Պ. Փ.
Կ. Պօլսի Թ. Կ. Կ. Միւս
« Արժանապատիւ սիրելի մեր .
« Ինչպէս որ յայտնի է՝ ասկէց ա-

